

Յունիսյան վարժություններ 2

Բ. Վարժություններ **նայիմ** չբ նայել; դիտել; նկատել, տեսնել; զգույշ լինել, ուշադիր լինել՝ բայով.

- անց. կատ. *նայեցայ;*
- հրամ. *նայեա՛ց* կամ *նայեա՛*, հոգն. *նայեցա՛յք* կամ *նայեցարո՛ւք;*
- անց. դբ. *նայեցեալ:*

Սա էլ, *հայիմ* չբ-ի նման, հաճախ է գործածվում {ի / ընդ + հայցական} կառույցով (երբեմն էլ՝ *ամ*):

- 1. «Մի՞թե [այն մարդը,] որ բարձրին է նայում [+ ընդ], չի տեսնի [I ապառնի]»:
▶ Միթե
- 2. «Նայեցի՞ր քո մտքով իմ ծառային՝ Յոբին [առանց ի նախդրի]»:
▶ Ն
- 3. «Արթնացրո՛ւ [զարթնում չբ-ի պբ] իմ աչքերը, և կնայեմ [II ապառնի + ընդ] քո օրենքների սբանչելիքներին»:
▶ 2
- 4. «Նայի՞ր [կարճ] ու լսի՞ր ինձ [առանց նախդրի], տեր Աստված իմ: Լույս տուր, Տեր, իմ աչքերին, որ երբեք չննջեմ [ննջեմ, -եցի չբ, II ապառնի] ի [< իրանական *marθ(y)u-, հմմտ. ավեստ. mərəθiiu-]»:
▶ Ն
- 5. «Աստված, Աստված իմ, նայի՞ր [նախդիրով, բայց՝ ո՛չ ի, ո՛չ ընդ] ինձ, ինչո՞ւ [ընդէ՞ր] լքեցիր [թողում՝նբ] ինձ»:
▶ Ա
- 6. «Եվ ասում է ինձ [նախդիրով]. Նայի՞ր դու [+ ընդ] վեր և տե՛ս սբանչելիքները, որ ցույց եմ տալիս [ցուցանեմ՝նբ] քեզ»:
▶ Ե
- 7. «Նայի՞ր, երկինք, և ես կխոսեմ [խօսիմ՝հբ, II ապառնի]»:
▶ Ն

Գ. Մեր նախորդ դասերից իմացանք, որ *ի* խոնարհման պարզ բայերն անցյալի հիմքից կազմվող ժամանակաձևերում խոնարհվում են **ցոյական** հիմքով և **կրավորածն** վերջավորություններով.

հայիմ չբ

- անց. կատ. *հայեցայ;*
- հրամ. *հայեա՛ց* կամ *հայեա՛*, հոգն. *հայեցա՛յք* կամ *հայեցարո՛ւք;*
- անց. դբ. *հայեցեալ.*

նայիմ չբ

- անց. կատ. *նայեցայ;*
- հրամ. *նայեա՛ց* կամ *նայեա՛*, հոգն. *նայեցա՛յք* կամ *նայեցարո՛ւք;*
- անց. դբ. *նայեցեալ:*

Ահա **հայիմ** բայի հարացույցների աղյուսակը.

	Ներկա	Անց. անկ.	1-ին ապ.	Արգել.
Եզ.	հայիմ	հայէի	հայիցիմ	մի՛ հայիր
	հայիս	հայէիր	հայիցիս	
	հայի	հայէր	հայիցի	
Հգ.	հայիմք	հայէաք	հայիցիմք	մի՛ հայիք
	հայիք	հայէիք	հայիցիք	
	հային	հայէին	հայիցին	

	Անց. կատ.	2-րդ ապ.	Բուն հրամ.
Եզ.	հայեցայ	հայեցայց	հայեա՛ց, հայեա՛
	հայեցար	հայեցիս	
	հայեցաւ	հայեցի	
Հգ.	հայեցաք	հայեցուք	հայեցարո՛ւք
	հայեցայք, -արուք	հայեցիք	
	հայեցան	հայեցին	

Նախաձարժանքում տեսանք նաև, որ այդ կաղապարից շեղվում է հետևյալ անկանոն բայը, որ ունի անցյալ կատարյալի արմատական (ոչ թե ցոյական) հիմք՝

Նստիմ չք՝ Նստել; բազմել; հեծնել; դադարել, կանգ առնել մի տեղում՝

- անց. կատ. **Նստայ** [+ *Նստեցայ* ձևի փոխարեն];
- հրամ. **Նի՛ստ** և **Նստարո՛ւք** [+ *Նստեա՛ց* և + *Նստեցարո՛ւք* ձևերի փոխարեն]:

Ճնթ. Չշփոթել՝ *Նստեմ* նք (*Նստեցի*)՝ սեղմել, կուչ ածել, մի բանի ծավալը ճնշելով փոքրացնել՝:

	Ներկա	Անց. անկ.	1-ին ապ.	Արգել.
Եզ.	նստիմ	նստէի	նստիցիմ	մի՛ նստիր
	նստիս	նստէիր	նստիցիս	
	նստի	նստէր	նստիցի	
Հգ.	նստիմք	նստէաք	նստիցիմք	մի՛ նստիք
	նստիք	նստէիք	նստիցիք	
	նստին	նստէին	նստիցին	

	Անց. կատ.	2-րդ ապ.	Բուն հրամ.
Եզ.	նստայ	նստայց	նի՛ստ
	նստար	նստցիս	
	նստաւ	նստցի	
Հգ.	նստաք	նստցուք	նստարո՛ւք
	նստայք, -արուք	նստցիք	
	նստան	նստցին	

- 1. «Սա չէ՞ր, որ նստում էր և մուրում էր [*մուրանամ*]»:
▶ ո՞չ
- 2. «Այնտեղ [*անդ*] նստում և լալիս էինք [*լամ*], երբ որ [*դրպետ*] հիշեցինք [*իշեմ*] մենք *անդ* Տիօն-ը»:
▶ Անդ
- 3. «(Կ)նստի [*I ապանի*] իր իշխանությունում»

▶ ն

- 4. «Եվ ասում է Գաղ մարգարեն Դավիթին. Մի՛ նստիր (այդ) **X**-ում [հնդեվր. **h₂(e)ngʷH₂-ih₂-*], այլ վեր կաց [յառնես] և կգնաս [երթամ չբ (անց.կատ. չոգայ, II ապամնի **երթի-*, 1եզ. երթայց, 3եզ. երթի-ցէ), դրե՛ք II ապամնիով] Յուդայի [*Յուդա*] երկիրը: Գնաց Դավիթը և **Y** [հնդեվր. **h₁é-gʷem-*] նստեց Սարիթ քաղաքում»:
 - ▶ ԵԼ

- 5. «Եվ նստեց տապանը յոթերորդ ամսում [*ամիս*, սեռ. *ամսոյ* կամ *ամսեան*]՝ ամսվա քսանյոթին, Արարատի լեռներին»:
 - ▶ ԵԼ

- 6. «Եթե քո ծառան շնորհք **X** [հնդեվր. **h₁e-uid-e-*] քո աչքերի առաջ, **Y** [հնդեվր. **h₁m-ǵʰi*] տեղ կտաս [II ապամնի] անդաստանում [*անդ-ք*] քաղաքներից մեկում [*մի*], և կնստեմ [II ապամնի] այնտեղ [*անդ*]»:
 - ▶ Եթե

- 7. «և կնստի [II ապամնի] քո տանը»
 - ▶ ԵԼ

- 8. «Եվ ասում է *Յուդա ցԹամար ցX* [հնդեվր. **snusos*] *իւր*. Նստի՛ր *այրի* քո հոր տանը, մինչև իմ մեծ որդի *Տղա՛ւմ*-ը մեծ լինի [*լիկիւմ* չբ, II ապամնի (*դ-ով*)]. որովհետև ասում էր, թե. Գուց նա ևս կմեռնի [*մեռանիւմ* չբ, I ապամնի], որպես և նրա եղբայրները: Գնաց Թամարը և նստեց իր հոր տանը:
 - ▶ ԵԼ

- 9. «Տեսե՛ք, որ Տերը այս շաբաթ օրը **X** [հնդեվր. **h₁e-deh₃-*] ձեզ: Դրա համար էլ նա վեցերորդ օրը ձեզ **X** [հնդեվր. **h₁e-deh₃-*] երկու օրվա (օրերի) հաց: Յուրաքանչյուր(դ) նստե՛ք ձեր տներում, և եօթներորդ օրը (ոչ) ոք չեւնի [*եւանես* չբ, I ապամնի] իր տեղից»:
 - ▶ S

- 10. «Եվ նստեցիք [*έν Κάδης*] **X** [հրան. փոխառ.; հմմտ. հուն. *καύς*] **Y**-եր [հնդեվր. **Hh₂m-ō*]»:

Տես ցածում՝ պատմալեզվական վարժությունները:

 - ▶ ԵԼ

Դ. Պատմալեզվական վարժություններ՝ Գ.10 վարժությանը կից

Գտե՛ք **X**-ը. տվե՛ք հնդեվրոպական արմատը և դրա իրանական ու սանսկրիտ ժամանգները՝ նկատի ունենալով, որ հնդեվրոպական արմատի ներսում ո՛չ իսկական ձայնավոր կա, ոչ էլ կոկորդային: Ի՞նչ օրենքի օգնությամբ կբացատրեք հունական ու սանսկրիտ ձևերը: Ի՞նչ տեսք կունենար հայկական ժամանգը, եթե պահպանված լիներ:

Գտե՛ք **Y**-ը: Այս բառում արտացոլված հնչյունական զարգացման այլ՝ սիմետրիկ օրինակ կա մի ազգակցական բառում: Նշե՛ք այդ բառն ու բացատրե՛ք հնչյունական զարգացումը:

▶ **Պատմալեզվական մեկնաբանություններ**
X.

Հրաչ Մարտիրոսյան
24.06.2021, Leiden
hrch.martirosyan@gmail.com